

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ**  
**ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ**  
**ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ,**  
**ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՅԻԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ**  
**ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ,**

**ԵՎ**  
**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ**  
**ԿՈՂՄԻՑ**

**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄՍՀԿ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**  
**(18-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ, ԺՆև, 25-29 ՄԱՅԻՄԻ, 2009)**

Միջազգային գրադարանային հանրությունը գտնում է, որ 21-րդ դարում շտապ անհրաժեշտություն է առաջացել հեղինակային իրավունքի մասին օրենքում ընդգրկված բացառությունների և սահմանափակումների դերի նկատմամբ նոր ըմբռնում ցուցաբերել և անդամակից երկրների կողմից համապատասխան քայլեր ձեռնարկել՝ ներառելու դրույթներ իրենց ազգային օրենքներում թվային տեղեկատվության հասանելիության վերաբերյալ;

**Գիտակցելով** հեղինակային իրավունքի մասին օրենքում ընդգրկված բացառությունների և սահմանափակումների ծավալի ընդլայնման համընդհանուր հրատապ անհրաժեշտությունը ողջ աշխարհում գրադարանային ծառայությունների և գիտելիքի հասանելիության համար [1];

**Գնահատելով** գրադարանների[2] դերը՝ որպես ողջ պատմության ընթացքում տարբեր ազգերի ու ժողովուրդների գիտական պաշարների, մշակութային ժառանգության, կոլեկտիվ հուշերի պահոցներ;

**Կարևորելով** գրադարանների հասարակական առաքելությունը, որը հաճախ կառավարվում է օրենքով, իրականացնելու գիտական պաշարների բարելավում ուսուցման, հետազոտության և հասարակության հետաքրքրությունների համար;

**Կարևորելով** այն, որ գրադարանները ներկայումս պետք է իրականացնեն իրենց հասարակական լիազորությունները համընդհանուր թվային միջավայրում;

**Ընդունելով** հեղինակային իրավունքի մասին օրենքի դերը՝ աջակցելու գրադարանների հիմնական գործունեությանը, այն է՝ օրինականորեն թույլատրել կատարելու նյութերի պահպանություն, փոխատվություն, միջգրադարանային սպասարկում, հետազոտական և անձնական նպատակների համար պատճենահանում;

**Ընդգծելով**, որ բացառությունները և սահմանափակումները ներառում են երկարատև ռազմավարական նպատակներ և սկզբունքներ, որոնք կիրառելի են՝ անկախ ստեղծագործության ձևից;

**Ընդգծելով**, որ հեղինակային իրավունքի մասին շատ ազգային օրենքներ կարգավորում են գրադարանների կողմից տպագիր ստեղծագործությունների օգտագործումը, մինչդեռ թվային

ստեղծագործությունների օգտագործման համար նույն օրենքները միջազգային ստանդարտներին համաձայն վերանայված չեն;

**Ընդգծելով**, որ տեղեկատվության մասնավոր լիցենզավորումը հաճախ արգելում է պաշտպանված ստեղծագործությունների օգտագործումը՝ խափանելով գրադարանների ծառայությունները և խոչընդոտելով մտավոր ու ստեղծագործական գործունեությունը;

**Ընդգծելով**, թվային ստեղծագործությունների օգտագործման վերաբերյալ արդյունավետ դրույթների բացակայությունը և պաշտպանության տեխնիկական միջոցների օգտագործմամբ գրադարանների կողմից օրենքով սահմանված գործողությունների կատարման խոչընդոտումը;

**Տեղյակ լինելով**, որ մեծածավալ աշխատանքներ իրականում կորած են, հետազոտողները ի վիճակի չեն լինում ձեռք բերել անհրաժեշտ թվային տեղեկություն՝ ավարտելու իրենց աշխատանքը, և արդեն ստեղծված մեծածավալ թվային տեղեկությունը կանոնավոր կերպով չի հավաքվում կամ պահպանվում և ենթակա է կորստյան;

**Ընդգծելով**, որ մարդկությունը կանգնած է պատմական թվայնացրած գրառումների անհասանելիության առջև, որն իր հերթին խոչընդոտում է կրթության, գիտության և մշակույթի առաջընթացին, եթե քայլեր չձեռնարկվեն ամրապնդելու բացառություններն ու սահմանափակումները, որոնք համընդհանուր կերպով կառավարում են գրադարանային գործունեությունը;

**Ընդգծելով**, որ զարգացող և անցումային երկրների բնակչությունը ոչ միշտ է օգտվում բացառությունների ու սահմանափակումների ճկուն համակարգից, որն իրենց համար մատչելի կլինի մտավոր սեփականության սիստեմի շրջանակներում;

**Ընդգծելով**, որ բացառությունների ու սահմանափակումների նկատմամբ համընդհանուր մոտեցումը մեկն է այն կարևոր խնդիրներից, որ առկա է ներկայիս հեղինակային իրավունքի ռեժիմի պայմաններում;

**Հաստատելով**, որ խնդիրը տարածվում է նաև Բեռնի կոնվենցիայի կառուցվածքի վրա, որը շատ հստակ ու մանրամասնորեն ապահովում է իրավատերերի իրավունքների պաշտպանությունը, մինչդեռ համապատասխան ձևով չի երաշխավորում, որ հանրային հետաքրքրությունը կբավարարվի միայն բացառությունների ու սահմանափակումների ստեղծմամբ;

**Հաստատելով**, որ միջազգային և ազգային օրենքներում իրավատերերի իրավունքները ընդարձակ ձևակերպված լինելու հետևանքով ժամանակի ընթացքում ավելի են ընդլայնվում՝ շնորհիվ նոր զարգացած տեխնոլոգիաների, մինչդեռ, բացառություններն ու սահմանափակումները սեղմ են շարադրված ու մեկնաբանված և հաճախ նունիսկ այնքան խիստ, որ հնարավոր չէ այն հարմարեցնել նոր տեխնոլոգիաներին ու նոր իրականությանը;

**Ընդգծելով**, որ իրավատերերի իրավունքները շարունակում են ընդլայնվել ու հարմարեցվել նոր ժամանակներին, մինչդեռ բացառություններն ու սահմանափակումները մնում են անփոփոխ կերպով ամրագրված և թվային տեխնոլոգիաների առաջընթաց փոփոխությունների հետևանքով վտանգված հնանալու, դառնալու անգործածական;

**Ընդգծելով**, որ տեխնոլոգիաների դրամատիկ և շարունակական փոփոխության հետ մեկտեղ բացառությունների ու սահմանափակումների դերն անընդունելիորեն դառնում է անհավասարակշռված:

Գրադարանային հանրությունը հայտարարում է, որ բացառություններն ու սահմանափակումները պահպանելով հեղինակային իրավունքի մասին օրենքի երկարատև գործառնություն հասարակության մեջ, պետք է դիտվեն որպես հասարակական իրավունքներ, տեղեկատվությունից օգտվելու մարդու անձնական իրավունքներ, որոնք նույնպես պաշտպանվում են հեղինակային իրավունքի մասին օրենքներով: Դրանք պետք է դիտվեն որպես հեղինակային իրավունքի մասին օրենքի գործառնության անբաժանելի մաս, քանի որ այն աջակցում է նորարարության, ստեղծագործական մտքի և տնտեսական աճի զարգացմանը ողջ աշխարհում:

Հեղինակային և հարակից իրավունքներով զբաղվող ՄՄՀԿ մշտական հանձնաժողովը (SCCR/18) շարունակում է իր քննարկումները բացառությունների ու սահմանափակումների վերաբերյալ, որոնք ընդգրկվել են 2004 թ. Չիլիի կառավարության կողմից ՄՄՀԿ-ին ուղղված առաջարկությունների մեջ (SCCR/12/3) and 2005 (SCCR/13/5), և Բրազիլիայի, Չիլիի, Նիկարագուայի և Ուրուգվայի կառավարությունների կողմից 2008 թ. ՄՄՀԿ-ին ուղղված հետևյալ առաջարկության մեջ (SCCR/16/2): 2005թ. նոյեմբերի առաջարկության մեջ Չիլին կրկին կարևորեց SCCR –ի աշխատանքը “ուժեղացնել բավարար սահմանափակումներ ունենալու միջազգային ըմբռնումը, սովորելով առկա նմուշներից և հանուն հանրային հետաքրքրությունների կնքել նոր համաձայնագրեր բացառությունների ու սահմանափակումների վերաբերյալ, որոնք՝ որպես մինիմում ստանդարտներ, պետք է ընդգրկվեն բոլոր օրենսդրությունների մեջ հանուն միջազգային հանրության” (SCCR/13/5).

Չիլին սահմանում է, որ SCCR-ը պետք է ստանձնի աշխատել հետևյալ երեք բնագավառներում.

1. Նույնականացումներ, անդամակից երկրների ազգային մտավոր սեփականության համակարգերից, ազգային մոդելներից և բացառություններին ու սահմանափակումներին վերաբերող պրակտիկայից.
2. Բացառությունների ու սահմանափակումների վերլուծություն՝ խրախուսելու ստեղծագործական միտքն ու նորարարությունը և դրանց հիման վրա կառուցելու հետագա զարգացումը.
3. Բացառությունների ու սահմանափակումների վերաբերյալ համաձայնագրի հաստատում հանրային հետաքրքրության նպատակով, որը պետք է որպես մինիմում արտացոլված լինի բոլոր ազգային օրենսդրություններում՝ հոգուտ հանրության, հատկապես, ապահովելու գիտելիքի հասանելիություն հասարակության ամենախոցելի կամ սոցիալապես անապահով հատվածների համար;

**Մենք գնահատում ենք SCCR-ի կողմից կատարված վերջին աշխատանքը, որի նպատակն էր ուսումնասիրել բացառություններն ու սահմանափակումները թվային միջավայրում, թույլ տեսնողների, գրադարանների և արխիվների, ինչպես նաև կրթական գործունեության համար, ցուցադրելով բացառությունների ու սահմանափակումների վերաբերյալ ազգային մոդելներն ու պրակտիկան:** Հույս ունենք, որ այս ուսումնասիրությունները հիմք կապահովեն ամրապնդելու համապատասխան բացառությունների ու սահմանափակումների վերաբերյալ միջազգային ըմբռնումը և վերականգնելու անհրաժեշտ բալանսը՝ պահպանելու կայուն և հաստատուն համընդհանուր տեղեկատվական հասարակություն:

Մենք շտապեցնում ենք ՄՄՀԿ-ին շարունակել աշխատել այն բոլոր բնագավառներում, որ նշել է Չիլին իր առաջարկության մեջ: 2-րդ սեկտորի վերլուծության հետ մեկտեղ, մենք առաջարկում ենք փաստերի վրա հիմնված ուսումնասիրություն՝ ուղղված գրադարանների համար նախատեսված բացառություններին ու սահմանափակումներին, որը կնպաստի ստեղծագործական մտքի ու նորարարության տարածմանն ու դրանից բխող հետագա զարգացմանը: Այս ուսումնասիրությունը պետք է նպատակաուղղված լինի բոլոր ազգային օրենքներում հանրային հետաքրքրությունները մինիմում բավարարող հիմնական բացառությունների ու սահմանափակումների վերաբերյալ համաձայնության ձեռք բերմանը:

Մենք խնդրում ենք, որ ՄՄՀԿ-ն կոնկրետ միջոցներ առաջարկի մտավոր սեփականության կառավարման համար, որը նպատակաուղղված կլինի հնարավոր բացառությունների ու սահմանափակումների ընդլայնմանը ընդհանրապես և զարգացող երկրների համար՝ մասնավորապես: Եթե բացառություններն ու սահմանափակումները բացակայում են որոշ ազգային օրենքներում[3], մենք խնդրում ենք ՄՄՀԿ-ին աջակցելու դրանց ստեղծմանը՝ մեկտեղ ապահովելով տեխնիկական աջակցություն և թեմատիկ աշխատանքային ծրագրեր՝ առաջարկված ՄՄՀԿ Զարգացման ծրագրի շրջանակներում:

Մենք խնդրում ենք, որ ՄՄՀԿ անդամակից երկրները քայլեր ձեռնարկեն լրացնելու բացառությունների ու սահմանափակումների վերաբերյալ համապատասխան դրույթների պակասը իրենց ազգային օրենքներում: Սա կատարելով՝ անդամակից երկրները կնպաստեն իրենց ազգերի մտավոր և ստեղծագործական կյանքի զարգացմանն ապագայում:

Մենք խնդրում ենք, որ անդամակից երկրները ընդունեն հետևյալ առաջարկությունները՝ առաջնորդվելու հեղինակային իրավունքի վերաբերյալ ազգային օրենքներում գրադարանների և արխիվների համար բացառություններն ու սահմանափակումները ձևակերպելիս:

## Պահպանում

Գրադարանին պետք է թույլատրվի պահպանելու նպատակով՝ պատճենումներ կատարել իրենց հավաքածուների հրատարակված և չհրատարակված ստեղծագործություններից՝ ներառյալ ստեղծագործությունները տարբեր ձևաչափերի փոխելը:

Յոթանասուն երկրներ ներկայումս օրինական կերպով թույլ են տալիս գրադարաններին կատարել պատճենումներ պահպանության նպատակներով: Վաթսունյոթ երկրներ թույլատրում են գրադարաններին վերարտադրել ստեղծագործությունները կորած օրինակները փոխարինելու նպատակով և հիսուներեք երկրներ ունեն բացառություններ, որ թույլատրում են գրադարանին պատճենահանել օրինակներ այլ գրադարանին տրամադրելու համար[4]: Այնուամենայնիվ, այս դրույթներից շատերը չեն տարածվում բոլոր հեղինակային իրավունքներով պահպանված ստեղծագործությունների վրա, ինչպիսիք են, օրինակ, տեսալսողական ստեղծագործությունները, ձայնագրությունները և չունեն հստակ դրույթներ, որ կիրառելի լինեն թվային ստեղծագործությունների համար: Գրադարանները աշխարհի կեսից ավելի երկրներում չունեն հստակ իրավական թույլտվություն իրականացնելու իրենց առաքելությանը բնորոշ

գործունեություն, և առավել շատ գրադարաններ իրավասու չեն մատուցելու թվային տեղեկատվություն: Պահպանության նպատակով ընդունված դրույթը հավասարապես պետք է տարածվի նաև հեղինակային իրավունքով պահպանված բոլոր կատեգորիաների ստեղծագործությունների վրա՝ անկախ տեսակից ու ձևաչափից: Գրադարաններին պետք է թույլատրվի պահպանել վնասվելուց, մաշվելուց ու կորստից բոլոր տեսակի ստեղծագործությունները;

## **Փաստաթղթերի (Վավերագրերի) պարտադիր օրինակ**

**Փաստաթղթերի (Վավերագրերի) պարտադիր օրինակի մասին օրենքներն ու համակարգերը պետք է ընդլայնվեն՝ ընդգրկելով իրենց մեջ նաև բոլոր ձևաչափերով հրատարակված ստեղծագործությունները՝ թույլատրելով նաև այդ ստեղծագործությունների պահպանությունը:**

Պարտադիր օրինակի սիստեմը պահանջում է, որ կազմակերպությունները և անհատները հրատարակեն բազմաթիվ օրինակներով փաստաթղթեր խոշոր ազգային հաստատություններին մեկ, կամ ավելի օրինակներ տրամադրելու նպատակով: Սա էական նշանակություն ունի ազգային գրադարանների հավաքածուները համալրելու համար և վստահ լինելու, որ ազգի մշակութային արժեքները հավերժ պահպանվում են բոլոր ժամանակների համար: Պարտադիր օրինակի մասին օրենսդրությունը երբեմն բացառում է որոշ կատեգորիայի ստեղծագործություններ և ոչ տեքստային ձևաչափեր, ինչպիսիք են՝ ձայնագրությունները և տեսալսողական ստեղծագործությունները: Պարտադիր օրինակի մասին օրենսդրությունը շատ ազգերի մոտ չի ընդգրկում էլեկտրոնային հրատարակությունները: Հաշվի առնելով թվային ստեղծագործությունների խոցելի բնույթը, պարտադիր օրինակի մասին օրենսդրությունը պետք է ընդգրկի նաև այնպիսի հոդված, որը թույլ կտա պահպանել ստեղծագործությունները՝ անկախ ձևաչափից և հեղինակային իրավունքի մասին օրենքում առկա այն հոդվածներից, որոնք արգելում են նման գործողությունները:

## **Միջգրադարանային փոխանակություն և էլեկտրոնային փաստաթղթերի սպասարկում**

***Գրադարանները պետք է կարողանան առաքել փաստաթղթերը անմիջական կերպով, կամ միջնորդ գրադարանի միջոցով՝ անկախ փաստաթղթի ձևաչափից և հաղորդակցման ձևից:***

Տասնյոթ երկրներ ներկայումս ունեն հատուկ բացառություններ փաստաթղթերի մատակարարման վերաբերյալ, մինչդեռ վեց երկրներ ունեն թույլտվություն պատճենելու միջգրադարանային փոխանակման համար, այն էլ անհատների պատվերով[5]: Որոշ ազգային օրենքներ թույլ են տալիս իրականացնել միջգրադարանային ծառայություններ՝ համաձայն ազգային օրենքի համապատասխան դրույթի, մինչդեռ այլ երկրների օրենքներ չեն ընդգրկում նման դրույթներ: Ստեղծագործությունների փոխանակումը կենսական նշանակություն ունի գիտելիքի զարգացման համար, հատկապես զարգացող երկրներում:

Ոչ մի գրադարան իր երկրի ներսում չի կարող ձեռք բերել բոլոր հրատարակված գրքերն ու ամսագրերը, կամ այլ հրատարակված ստեղծագործություններ: Գրադարանների համար սովորություն դարձած գործողություն է ընթերցողների խնդրանքով ստեղծագործությունների փոխանակումը միմյանց հետ ոչ առևտրային նպատակներով, որպեսզի ապահովեն գիտելիքի առավելագույն մատչելիություն և լավագույն սպասարկում իրենց ընթերցողների համար: Հավաքածուների փոխանակման այս համագործակցությունը սովորաբար հայտնի է որպես միջգրադարանային փոխանակում՝ տպագիր ստեղծագործությունների համար, և փաստաթղթերի միջգրադարանային սպասարկում՝ թվային ստեղծագործությունների համար: Միջգրադարանային գործառույթները էական նշանակություն ունեն ապահովելու գրադարանների հավաքածուների հարստությունն ու բազմազանությունը և պահպանելու ամուր գրադարանային ծառայություններ, որը թույլ կտա իրականացնել հավաքածուների փոխանակում՝ միննույն ժամանակ պաշտպանելով իրավատերերի օրինական շահերը:

### **Կրթությունը և լսարանային պարապմունքները**

*Գրադարանի կամ այլ ուսումնական հաստատության կողմից օրինական ճանապարհով ձեռք բերված ստեղծագործությունները պետք է մատչելի լինեն լսարանային պարապմունքների կամ հեռակա ուսուցման համար այնպես, որ այն անհիմն կերպով չվնասի իրավատիրոջ շահերը: Գրադարանին, կամ այլ ուսումնական հաստատությանը պետք է թույլատրված լինի կատարել ստեղծագործությունների պատճենումներ լսարանային պարապմունքների համար:*

Կրթության առաջընթացն անհնար կլիներ, եթե ուսուցիչները, դասախոսները կամ ուսանողները ամեն անգամ ուսումնական փաթեթների, ուսուցման, կրթության, կամ այլ ուսումնական գործունեության նպատակներով տվյալ ստեղծագործությունը վերարտադրելու համար թույլտվություն ձեռք բերեին: Խելամիտ չէր լինի ստեղծել անհրաժեշտ վարչական ենթակառուցվածք, որ յուրաքանչյուր ուսումնական, կամ կրթական նպատակի համար թույլտվություն տրամադրեր:

Նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ստեղծել ապահով վիրտուալ ուսումնական միջավայր և նոր գրավիչ եղանակներ՝ ուսուցանելու, սովորելու և փոխգործունեության համար: Բացառությունները պետք է այնքան ընդլայնվեն, որ ապագա ուսանողները կարողանան էլեկտրոնային ստեղծագործությունները այնպես ազատ օգտագործել, ինչպես իրենց նախորդները՝ տպագիր ստեղծագործությունները: Կրթությունը տնտեսական և սոցիալական զարգացման բանալին է՝ ինչպես այն գնահատվում է ողջ աշխարհում:

### **Վերարտադրություն հետազոտական և անձնական նպատակներով**

*Պետք է թույլատրելի լինի անհատ օգտագործողների կողմից առանձին ստեղծագործությունների պատճենումը հետազոտական, կրթական և այլ անձնական նպատակների համար:*

Այս դրույթը մեկն է հեղինակային իրավունքի մասին ազգային օրենքներում վերարտադրության վերաբերյալ լայնորեն կիրառելի բացառությունների և սահմանափակումների մասին դրույթներից:

Գրադարանավարները հաճախակի են ստանում ոչ առևտրային նպատակներով պատճենումներ կատարելու տարբեր խնդրանքներ ընթերցողների, տարբեր անհատների ու կազմակերպությունների կողմից, որոնք ցանկանում են պատճենել ստեղծագործական, ուսումնական և տեղեկատվության նպատակով: Պրակտիկ չէր լինի, եթե անհրաժեշտ լիներ թույլտվություն ստանալ օրինակի յուրաքանչյուր պատճենման համար, և այն կխոչընդոտեր տեղեկատվության ազատ հոսքը հասարակության մեջ:

Գրադարանները պետք է ի վիճակի լինեն ապահովել օգտվողներին պատճենման միջոցներով՝ անկախ ստեղծագործության ձևաչափից:

## **Դրույթ հաշմանդամների համար**

***Գրադարանին պետք է թույլատրվի փոխել ստեղծագործության ձևաչափը հաշմանդամներին այն մատչելի դարձնելու նպատակով: Բացառությունները պետք է կիրառելի լինեն բոլոր ձևաչափերի համար՝ օգտվողների կարիքները հարմարեցնելով տեխնոլոգիական առաջընթացին: Խուսափելու համար էլեկտրոնային ստեղծագործությունների վերարտադրումից, որն ավելի թանկ արժե, պետք է թույլատրվեն փոխանակում իրականացնել արտերկրների հետ:***

Մարդու իրավունքները խախտվում են, երբ հաշմանդամների համար գիտելիքի մատչելիությունը խոչընդոտվում է: Բոլոր մարդիկ կարողալու, սովորելու և իրենց կյանքը բարելավելու իրավունք ունեն: Զարգացող երկրներում հաշմանդամ մարդկանց նկատմամբ միջազգային հանրության կողմից առանձնահատուկ ուշադրություն է պահանջվում: Արտերկրների հետ փոխանակումը ներկայումս տանում է դեպի իրավական անորոշություններ, որոնք խոչընդոտում են նոր տեխնոլոգիաների և սպասարկման աշխատանքների իրականացումը՝ ի շահ հաշմանդամների կյանքի բարելավման: Քայլեր պետք է ձեռնարկվեն ընդլայնելու հաշմանդամների համար նախատեսված ազատ օգտագործման դրույթները այնպես, որ գրադարանները կարողանան ապահովել նրանց ցանկացած ձևաչափով տեղեկատվությամբ:

## **Գրադարանների համար կիրառելի ազատ օգտագործման ընդհանուր բացառություններ**

***Ազատ օգտագործման ընդհանուր բացառությունը, համապատասխան արդար օգտագործման դրույթին, օգնում է ապահովել գրադարանային ծառայությունների արդյունավետ մատուցում:***

Ընդհանուր բացառությունները, ինչպիսիք են արդար օգտագործում, արդար գործարքներ, պետք է տարածվեն նաև գրադարանային միջոցառումների վրա՝ որպես լրացում գրադարանների համար նախատեսված հիմնական բացառությունների: Որոշ երկրներում ազատ օգտագործման ընդհանուր բացառությունները կիրառվում են հետազոտական և ուսումնական նպատակների, քննադատության, կամ վերանայման, նորությունների տեղեկացման, պարոդիայի կամ սատիրայի, դատական պրոցեսների համար: Այլ երկրներում, հատկապես Միացյալ Նահանգներում, արդար օգտագործումը տարածվում է միայն որոշակի գրադարանային գործունեության վրա: Գրադարանային և արխիվային որոշակի բացառություններ չպետք է դիտվեն գրադարանների և արխիվների գործունեության համար թույլատրելի սահմաններից դուրս: Արդար օգտագործումն ու արդար գործարքները հիմք են ծառայում, որպեսզի հետագայում գրադարաններին թույլատրվի հարմարեցնել իրենց կողմից մատուցած ծառայությունները նոր պահանջներին՝ նախքան նոր բացառությունների ընդունումը:

## Անհայտ հեղինակի ստեղծագործություններ

*Մեկ բացառություն է անհրաժեշտ լուծելու անհայտ հեղինակի ստեղծագործությունների խնդիրը, երբ հնարավոր չէ իրավաստիքոջը բացահայտել:*

Հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործություններից շատ բարեխիղճ օգտվողներ ի վիճակի չեն գտնել իրավատերերին, որպեսզի թույլտվություն ձեռք բերեն նրանցից: Գրադարանների և մշակութային ժառանգության հասանելիությունն ապահովող կազմակերպությունների համար իրավատերերին գտնելու դժվարությունը խոչնդոտում է մուտքը դեպի ազգային և յուրօրինակ հավաքածուները: Վախենալով պատասխանատվություն կրելուց, գրադարանները ետ են կանգնում անհայտ հեղինակի (կամ ”որք”) ստեղծագործություններն օգտագործելուց, նույնիսկ, երբ այն օգտագործվում է ոչ շահույթ ստանալու, օրինակ՝ պահպանության նպատակով: Անհայտ հեղինակի ստեղծագործություններն արդար օգտագործելու մեխանիզմ մշակելով՝ կկրճատվի գրադարանների պատասխանատվության ենթարկվելու ռիսկը և հնարավորություն կստեղծվի ընդլայնել միլիոնավոր ստեղծագործությունների հասանելիությունը:

Անհայտ հեղինակի ստեղծագործություններին վերաբերվող սահմանափակման դրույթը կօգնի պահպանել և հասանելի դարձնել այդ ստեղծագործությունները, որը հակառակ պարագայում անհնարին կլիներ:

## Գույքային իրավունքների գործողության ժամկետը

*Բեռնի կոնվենցիայի համաձայն՝ հեղինակի գույքային իրավունքները գործում են հեղինակի կյանքի ընթացքում և շարունակում են գործել նրա մահից հետո՝ 50 տարի:*

Գրական գեղարվեստական ստեղծագործությունների համար գույքային իրավունքների պահպանության ստանդարտ ժամկետն ընդգրկում է հեղինակի կյանքի տարիները և նրա մահից հետո 50 տարի՝ ինչպես ամրագրված է Բեռնի կոնվենցիայում և TRIPS պայմանագրում: Գույքային իրավունքների գործողության ժամկետի երկարաձգումը նշանակում է, որ տեղեկատվությունը շարունակում է ավելի երկար մնալ որպես մասնավոր սեփականություն՝ ի օգուտ իրավատերերի և՝ ի վնաս գրադարանների, կրթության ոլորտի և անհատների:

Պաշտպանության տեխնիկական միջոցներ, որոնք արգելակում են օրինական օգտագործումը

*Գրադարաններին և գրադարաններից օգտվողներին պետք է թույլատրվի շրջանցել պաշտպանության տեխնիկական միջոցները ստեղծագործության արդար օգտագործումն ապահովելու նպատակով: Շատ երկրների օրենսդրության մեջ շրջանցման դեմ դրույթ ընդունելով, գերազանցում են ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագրի 11 հոդվածի պահանջները, դրանով իսկ արդյունավետ կերպով սահմանափակելով հեղինակային իրավունքի մասին օրենքում առկա բացառությունները:*



ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագիրը թույլ է տալիս օրենքում բացառություններ, բայց քիչ երկրներ են շրջանցման դեմ բացառություններն ընդգրկել իրենց օրենքներում՝ ի օգուտ գրադարանների և գրադարաններից օգտվողների : Բացառություններն ու սահմանափակումները քաղաքական հիմք ունեցող իրավական դրույթներ են իրենց նրբություններով ու բարդություններով հանդերձ, որ արտացոլում են ազգային պետական քաղաքականությունը: Պաշտպանության տեխնիկական միջոցների օգտագործումը կրճատում է տեղեկատվության գործընթացը՝ հասցնելով այն գրոյական աստիճանի՝ չեղյալ համարելով հասարակության շահերի համար ստեղծված կարևոր ազգային ռազմավարությունները: Նույնիսկ ավելին, շրջանցման դեմ օրենքով հաստատված շատ բացառություններ խիստ քննադատվել են որպես ոչ կիրառելի դրույթներ: ՄՄՀԿ-ն պետք է աջակցի այս խնդիրներին բոլորովին՝ նոր մոտեցում ցուցաբերելուն նվիրված ուսումնասիրությանը և նոր միջոցներ հստակեցնի օրենքն ըստ նպատակի կիրառելու համար:

## **Պայմանագրերը և օրենքով հաստատված բացառությունները**

*Պայմանագրերը չպետք է անտեսեն բացառություններն ու սահմանափակումները. Բացառությունների ապահովման նպատակներն ու ռազմավարությունը ազգային և միջազգային սկզբունքների կարևոր առաջարկություններ են և չպետք է փոփոխվեն պայմանագրով:*

Գրադարանների կողմից ձեռք բերված բազմաթիվ թվային ստեղծագործություններ ունեն կից լիցենզիաներ, որոնք հաշվի չեն առնում գրադարանային գործունեության համար նախատեսված օրենքով հաստատված բացառություններն ու սահմանափակումները: Պայմանագրի մասին մասնավոր օրենքը փաստորեն գերակա դիրք է գրավում հեղինակային իրավունքի մասին օրենքի նկատմամբ: Հետևաբար լիցենզիայի պայմանները, որոնք անտեսում են հեղինակային իրավունքի մասին օրենքի բացառությունների ու սահմանափակումների վերաբերյալ դրույթները, չպետք է հարկադրաբար առաջարկվեն գրադարաններին: Ի հավելումն անհատական աշխատանքների օգտագործման համար տրամադրվող լիցենզիաների, մենք ականատես ենք լինում, որ ավելի լայն բովանդակությամբ ու առավել խիստ պայմաններով լիցենզիաներ են կազմվում տարաբնույթ ստեղծագործությունների օգտագործման համար: Այս պայմանագրերը ի գորու են վերափոխել հեղինակային իրավունքի պահպանության կանոնները երկրի մտավոր ժառանգության մեծ մասի համար: Լիցենզային պայմանագրերը չպետք է ավելի խստացնեն հեղինակային իրավունքի պահպանության կանոնները:

## **Պատասխանատվության սահմանափակում**

*Պատասխանատվության սահմանափակման վերաբերյալ դրույթ պետք է լինի գրադարանների և գրադարանային ոլորտի աշխատողների համար, որոնք արդարացի են աշխատում, համոզված են, կամ բավարար հիմքեր ունեն համոզվելու, որ վարվում են հեղինակային իրավունքի մասին օրենքի համաձայն:*

Գրադարանները հասարակության համար տեղեկատվական ռեսուրսների հասանելիությունը ապահովող կարևոր միջնորդներ են: Գրադարաններն ու գրադարանային ոլորտի աշխատողները ջանում են հավատարիմ մնալ օրենքին, և նրանք հարգում են իրավատերերի օրինական շահերը: Իրականացնելով իրենց հասարակական առաքելությունը՝ աշխարհի բոլոր գրադարանները ամեն

օր հսկայական տեղեկատվություն են ապահովում, անխուսափելիորեն դեմ առ դեմ բախվելով օրենքի մեկնաբանման և կիրառման խնդիրներին : Գրադարանավարները, ովքեր ընդհանուր գիտելիքներ ունեն օրենքի մասին, տվյալ բնագավառում մասնագիտական վերապատրաստում չեն անցել, սովորաբար ստիպված են լինում հեղինակային իրավունքի վերաբերյալ իրենց հուզող հարցերին իրենք պատասխան տալ՝ չկարողանալով մասնագիտական իրավաբանական խորհրդակցություն ստանալ: Անդամակից երկրները պետք է գրադարանների ու գրադարանային ոլորտի աշխատողների համար առաջարկեն պատասխանատվության սահմանափակում ապահովել, քանի որ նրանք գործում են արդար և հեղինակային իրավունքի մասին օրենքի սահմաններում: Օրինական աշխատելով, գրադարանը քայլեր է ձեռնարկում հասկանալ և կիրառել օրենքի դրույթներն այնպես, որ պաշտպանվեն բոլորի շահերը:

1. Մեր երախտագիտություն ենք ցանկանում հայտնել Քեննեթ Քրյուսին ՄՄՀԿ անդամակից երկրների հեղինակային իրավունքի վերաբերյալ ազգային օրենքերում ի օգուտ գրադարանների և արխիվների ընդգրկված դրույթների վերաբերյալ առաջին լիարժեք հետազոտությունը մեզ տրամադրելու համար: Նրա՝ ՄՄՀԿ-ի հավանությանն արժանացած “Գրադարանների և արխիվների համար հեղինակային իրավունքի բացառություններն ու սահմանափակումները (2008)” աշխատությունը հետագա վերլուծություններ կատարելու հիմքեր է տալիս և ընդգծում ողջ աշխարհում հեղինակային իրավունքի բացառություններն ու սահմանափակումները գրադարանների և արխիվների համար ընդլայնելու անհրաժեշտությունը: Աշխատությունը մատչելի է հետևյալ ինտերնետային կայքում.

[http://www.wipo.int/edocs/mdocs/copyright/en/sccr\\_17/sccr\\_17\\_2.pdf](http://www.wipo.int/edocs/mdocs/copyright/en/sccr_17/sccr_17_2.pdf).

2. Այս փաստաթղթում “գրադարան” տերմինը սովորաբար վերաբերվում է և գրադարաններին և արխիվներին և նույն տերմինը օգտագործվել է արդյունավետության նկատառումներով:
3. Քսանմեկ երկրների հեղինակային իրավունքի վերաբերյալ ազգային օրենքերում բացակայում են ի օգուտ գրադարանների բացառությունների վերաբերյալ դրույթները;

Քեննեթ Քրյուս. “Հեղինակային իրավունքի բացառություններն ու սահմանափակումները գրադարանների և արխիվների համար (2008), 29

4. Քրյուս, 3
5. Քրյուս, 68.

Մայիս 2009